



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

21.07.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/58

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի
դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ալմաքսիմս» ՍՊԸ-ի տնօրեն

Գ. Շամիրյանի (պետական գրանցման վկայական թիվ 03Ա085505),

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ

Հ. Ավշարյանի (լիազորագիր տրված՝ 08.07.2020թ.),

Տ. Զիլավյանի (լիազորագիր տրված՝ 08.07.2020թ.),

Կ. Դրամբյանի (լիազորագիր տրված՝ 08.07.2020թ.),

քննելով «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական
պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/58»
ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի կողմից 29.06.2020թ.
ներկայացված (30.06.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-
2020/58 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Ալմաքսիմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ալմաքսիմա» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 29.06.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/58» ծածկագրով բաց մրցույթ: Գնման առարկա հանդիսացող բժշկական պարագաները խմբավորված են 7 չափաբաժիններում, որոնցից սույն բողոքի շրջանակներում Ձեր ուշադրությունն ենք հրավիրում 2, 3, 4, 5, 6, 7 չափաբաժինների վրա, որոնցով պատվիրատուն նախատեսում է գնել հետևյալ բժշկական պարագաները՝

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը
2	Կաթետր ախտորոշիչ
3	Կաթետր բալոն պերիֆերիկ
4	Կաթետր ուղղորդիչ
5	Ստենտ դեղապատ
6	Ստենտ դեղապատ
7	Ստենտ դեղապատ

Սույն չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերում պատվիրատուի կողմից ապրանքի տեխնիկական պահանջների մանրակրկիտ և օբյեկտիվ նկարագրությունից բացի ներառված է հետևյալ պահանջը՝

Մասնավորապես՝ պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:

Սույն պահանջը իրավական առումով հանգեցնում է գնման գործընթացում չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների խախտմանը, և ուղիղ իմաստով դեմ է ՀՀ Գնումների մասին օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գնումների հիմնարար սկզբունքներին՝ մասնավորապես մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

Պատվիրատուի կողմից սահմանված «պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ»-ի պահանջը նախատեսված է ՀՀ Կառավարության 2017 թվականի 4 մայիսի N 526-Ն որոշման V-րդ մասի 21-րդ կետի 1-ի ա կետով, բայց ունի կիրառման պարտադիր պայման՝ այն է՝ եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ըստ էության, պատվիրատուն պատասխանատու լինելով հրավերի տեխնիկական բնութագրի իրավաչափության համար, չի համապատասխանացրել սույն նորմի կիրառելիությունը հրավերի 2, 3, 4, 5, 6, 7 չափաբաժիններով նախատեսված ապրանքների համար և, անտեսելով կարգի պահանջը, ներառել է նշված պահանջը հրավերի տեխնիկական բնութագրերի մեջ ամբողջական բովանդակությունից դուրս՝ հատվածային:

Տվյալ դեպքում երաշխիքային նամակի պահանջը բացառապես արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից իրավական և բովանդակային առումով առնվազն անընդունելի ու անհասկանալի է՝ գնման ենթակա ապրանքի վաճառքի ՀՀ-ում հատուկ սահմանափակումների բացակայության պայմաններում և ըստ էության հանգեցնում է գնման գործընթացում չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, քանի որ այնպիսի պահանջվող փաստաթուղթը, որը կարող է տրվել բացառապես արտադրողից կամ նրա ներկայացուցչից, ուղղակիորեն սահմանափակում է հնարավոր այլ մասնակցի մասնակցության հնարավորությունը և դեմ է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գնումների հիմնարար հետևյալ սկզբունքներին՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Այդպիսի հնարավոր մասնակից կարող է լինել օրինակ այնպիսի կազմակերպությունը, ով պատրաստ է առաջարկել հրավերով նշված ապրանքը պատվիրատուի կողմից առաջադրած բոլոր տեխնիկական պահանջներին համապատասխան, ներառյալ համապատասխանության սերտիֆիկատներ, անհրաժեշտության դեպքում իր կողմից ձեռք բերման փաստաթղթեր, իր և իր մատակարար կազմակերպության կողմից երաշխիքային

Նամակ ապրանքի պատվիրատուի պահանջած արտադրողի և ֆիրմային համապատասխանության մասին, բայց ձեռք բերելով վերավաճառող կազմակերպությունից, պահանջված երաշխիքային նամակը ներկայացնել ոչ թե արտադրողից կամ ներկայացուցիչից, այլ իր և իր մատակարար/արտադրող կամ նրա ներկայացուցիչ չհանդիսացող/ կազմակերպությունից:

Խիստ կարևորելով նշյալ առարկաների առանձնահատկությունը՝ ելնելով մարդու կյանքի և առողջության տեսակետից, գնման առարկայի բնութագրում պարտադիր և հատկապես առաջնային նշանակություն ունեն առարկայի որակի, ստանդարտի, անվտանգության և այլ օբյեկտիվորեն անհրաժեշտ տեխնիկական չափորոշիչները բնութագրող պահանջները , քանի որ ակնհայտորեն արտադրողից կամ նրա ներկայացուցիչից ներկայացրած նամակը դեռևս երաշխիք չի կարող լինել, որ մասնակիցը միշտ մատակարարում է հենց այն ապրանքախումբը, որը ձեռք է բերել երաշխավորական նամակի շրջանակներում՝ հենց արտադրողից կամ նրա ներկայացուցիչից:

Ոստի ներառված պահանջը ըստ էության հանգեցնում է Գնումներ մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի հետևյալ դրույթների խախտմանը, ըստ որի՝

Գնման առարկայի բնութագրերը՝

- 1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.
- 2) Չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.
- 3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Ակնհայտորեն պատվիրատուն հրավերում սահմանել է ելնելով ՀՀ Կառավարության 2017 թվականի 4 մայիսի N 526-Ն որոշման V-րդ մասի 21-րդ կետի 1-ի ա կետի՝ օգտագործելով մասնակի կտրված հատվածը՝ առանց բովանդակային ամբողջության, այն է՝ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցիչ երաշխիքային նամակ, սակայն վերոնշյալ կետն ամբողջությամբ հետևյալն է՝

Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման

փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:

Ըստ էության պատվիրատուն պատասխանատու լինելով հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջների իրավազափության համար՝ չի համապատասխանացրել սույն նորմի կիրառելիությունը վեճի առարկա հանդիսացող առարկաների համար և անտեսելով կարգի պահանջը ներառել է հրավերի տեխնիկական պահանջի մեջ՝ խախտելով ՀՀ Կառավարության 2017 թվականի 4 մայիսի N 526-Ն որոշման V-րդ մասի 21-րդ կետի 1-ի ա կետով սահմանված դրույթը:

Ըստ էության հրավերի 2, 3, 4, 5, 6, 7 չափաբաժիններով նախատեսված ապրանքների պարագայում տեխնիկական բնութագրերում պահանջվող «պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ»-ը ակնհայտորեն սահմանափակում է այն հնարավոր կազմակերպության մասնակցությունը գնման գործընթացին, ով, ինչպես վերը նշեցինք, կարող է ներկայացնել պատվիրատուի տեխնիկական պահանջներին ամբողջությամբ բավարարող նույն ֆիրմային արտադրանք հանդիսացող ապրանք նույն արտադրողից, բայց ձեռք բերած այլ վերավաճառողից և կից ներկայացնի երաշխիքային նամակ, որը, սակայն, պատվիրատուի կողմից համարվի անհամապատասխան հրավերի պահանջներին:

Այսպիսով արձանագրենք որ պատվիրատուն բացառապես իր հայեցողությամբ որոշում է նորմի կիրառելիությունը այս կամ այն ապրանքի համար՝ տալով տարաբնույթ մեկնաբանությունների և հնարավոր չարաշահումների տեղիք:

Դրա վկայությունը կարող է լինել այն որ պատվիրատուի կողմից հայտարարված համանման բժշկական պարագաների այլ հրավերում ապրանքների տեխնիկական բնութագրերում ներառված չէ այդ պահանջը, ընդ որում նշված ապրանքները ըստ էության ընդհանուր առմամբ համարվում են համանման ապրանքներ՝ մարդու կյանքի և առողջության պահպանման տեսակետից և առնվազն տարօրինակ է միայն դեղապատ ստենտերի համար սահմանել նմանօրինակ պահանջ:

Պատվիրատուի կողմից պահանջի սահմանումը հանգեցնում է մի իրավիճակի, որ կոնկրետ կազմակերպություններ, լինելով դեղապատ ստենտերի ներկայացուցիչներ, յուրաքանչյուրը մեկ չափաբաժնի մասով, ներկայացնում են պահանջվող երաշխիքային նամակը արտադրողից կամ նրա ներկայացուցչից և իրենց բարձր գնային առաջարկով

մշտապես հաղթող են ճանաչվում՝ դրանով իսկ ոչնչացնելով պետական գնումների ամբողջ տրամաբանությունը:

Այս պարագայում պատվիրատուի պահանջը ուղղակիորեն հանգեցնում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով, օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտման:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոնշյալ իրավական փաստարկները, պատվիրատուի հրավերով սահմանված «պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ»-ի պահանջը ևս հանգեցնում է գնման գործընթացում չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և ակնհայտորեն մրցակցության անհավասար պայմաններ է ստեղծում հնարավոր մասնակիցների համար:

Ներկայացնենք նաև բողոքի հետ անմիջականորեն առնչվող հետևյալ նկատառումները.

Նշենք նաև բացի մատակարար կազմակերպության երաշխիքային նամակի և ձեռք բերման փաստաթղթերի իրավական փաթեթից զատ ՀՀ Գնումների օրենսդրությունը ունի երաշխիքային սպասարկման և պայմանագրերի պատշաճ կատարումն ապահովող հստակ նորմեր՝ ի դեմ պայմանագրի կատարման և որակավորման ապահովումների, որոնք սահմանված լինելով «Գնումների մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի մեջ հանդիսանում են լուրջ երաշխիքային գործիքներ պետական գնումների համակարգում:

Նույն դեղապատ ստենտերի ձեռք բերման նպատակով պետական բժշկական հաստատությունների կողմից բազմիցս կազմակերպվել են մրցույթներ և կնքվել են պայմանագրեր՝ առանց վերը նշված պահանջի: Ընդ որում 2020թ.-ի մարտի 16-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ -ի կողմից ևս հայտարարվել է մեկ այլ՝ «ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ» ծածկագրով բժշկական գործիքերի և պարագաների ,այդ թվում նաև դեղապատ ստենտերի, ձեռք բերման նպատակով մրցույթի հրավեր, որի տեխնիկական բնութագրերում ներառված չէր վերը նշված պահանջները և կնքվել է մեր կազմակերպության հետ դեղապատ ստենտերի մատակարարման պայմանագիր:

Ամփոփելով բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները և մեր կողմից կատարված դիտարկումները՝

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/58» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 2, 3, 4, 5, 6, 7 չափաբաժիններով նշված ապրանքների տեխնիկական բնութագրերում «Պարտադիր պայման է հանդիսանում՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույլտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակ, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ» պահանջը համարում ենք չհիմնավորված խոչընդոտող հանգամանք, որը կհանգեցնի ոչ միայն պետական գնումների հիմնարար սկզբունքների և տրամաբանության, «Գնումների մասին» ՀՀ օրենքի վերը նշված դրույթների խախտմանը, այլ նաև կխոչընդոտի տնտեսական ազատ մրցակցության և հակամենաշնորհային ՀՀ Կառավարության որդեգրած պետական քաղաքականությանը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի և ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի դրույթները՝

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/58» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ չափաբաժիններով նշված ապրանքների տեխնիկական բնութագրերով պահանջվող անհիմն պահանջների վերացման համար, այն է՝

«Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ» և պահանջել պատվիրատուից կատարել փոփոխություն հրավերում՝ ապահովելով սույն գնման ընթացակարգին հնարավոր մասնակիցների հավասար և անկողմնակալ մասնակցություն»:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.07.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 02.07.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Մասնակիցը մատնանշել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածը, ըստ որի նորմատիվ իրավական ակտը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը, ելնելով դրանում պարունակող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված է հետևյալը՝ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

Գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված է և «Գնումների մասին» ՀՀ օրենքը և 04 մայիսի 2017թ. N526-Ն որոշումը, որով հաստատված է «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ը, լիազոր մարմնի կողմից հաստատված հրավերների օրինակելի ձևերը, ինչպես նաև այլ ակտեր:

Օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.

«1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էքսիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»:

Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված է հետևյալը.

«պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում»

Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի բառացի մեկնաբանությունից հստակ հասկացվում է հետևյալը.

1) մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացնելու անհրաժեշտությունը որոշում է Պատվիրատուն: Այս պահանջը ներկայացվում է հրավերով՝ համաձայն հաստատված օրինակելի ձևերի, իսկ մասնակիցը դրանք ներկայացնում է հավելված 1.1-ով: Այս ամենը առկա է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/58» ընթացակարգի հրավերում:

2) «պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: >> Այս միտքը հստակ սահմանում է, որ Պատվիրատուն կարող է պայմանագրի կատարման փուլում մասնակցից պահանջել կամ նշված մարմնի կողմից տրամադրված երաշխիքային նամակ, կամ համապատասխանության սերտիֆիկատ, երկուսից մեկը, ըստ կիրառելիության և դա որոշում է Պատվիրատուն: Հրավերով, Պատվիրատուն պայմանագրի կատարման փուլում պահանջել է նշված երաշխիքային նամակը:

Մասնակցի այն պնդումը, որ Կարգով նախատեսված երաշխիքային նամակը և համապատասխանության սերտիֆիկատը պետք է հրավերով պահանջվեն միաժամանակ, չի կարող լինել ճիշտ, քանի որ այդ երկու փաստաթղթերը բովանդակային տարբեր են, միմյանց չեն փոխարինում, ինչպես նաև դրանց ներկայացման պահանջը մասնակցի հայեցողությամբ կիրառելու դեպքում երաշխիքային նամակ ներկայացնելը պրակտիկորեն դառնում է աննպատակ և չկիրառվող: Մանրամասն ենք նշվածը.

Համապատասխանության սերտիֆիկատը տրամադրվում է սերտիֆիկացնող մարմնի կողմից ապրանքատեսակի համար, և ոչ մի կերպ չի արտահայտում կոնկրետ

ապրանքային խմբաքանակի մասին և (կամ) վաճառողի մասին տվյալներ: Բացի այդ, համապատասխանության սերտիֆիկատը հասանելի ռեսուրս է բոլորին և ցանկացած անձ կարող է համացանցից այն ներբեռնել և ներկայացնել: Համապատասխանության սերտիֆիկատը արտահայտում է այն իմաստը, որ տվյալ արտադրատեսակը համապատասխանում է որոշակի որակական պահանջների (ստանդարտների): Այն ապրանքների համար, որոնց որակի ստուգման նպատակով փաստացի փորձաքննություն իրականացնելը Հայաստանի Հանրապետությունում անհնար է, այս փաստաթղթի դերը հավասարվում է զրոյի: Հրավերով նախատեսված արտանոթային ստենտերի և նմանատիպ ապրանքների համար այն չի կարող հանդիսանալ որակի երաշխիք, քանի որ ստենտերի յուրաքանչյուր հատը ունի անհատական նույնականացման համար, որը չի կրկնվում, արտադրվում է տվյալ արտադրողի կողմից միակ օրինակով, այն չի կարող բացվել, ուսումնասիրվել, փորձաքննության ենթարկվել և դրանով հավաստել մեկ այլ օրինակի որակը, ուստի նման փաստաթղթի պահանջը տվյալ դեպքում կիրառելի չէ՝ նշանակության բացակայության հիմքով:

Երաշխիքային նամակի էությունը հենց կայանում է նրանում, որ արտադրողը կամ նրա ներկայացուցիչը պատասխանատվություն են ստանձնում յուրաքանչյուր հատ ապրանքի որակի, այդ ապրանքների տեղափոխման և պահպանման ժամանակ ջերմաստիճանային ռեժիմի ապահովման համար, ինչը ուղիղ կապ ունի ապրանքի որակի հետ և երաշխավորված չէ միայն համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման պարագայում: Արտադրողները երաշխիքային նամակը հեշտությամբ տրամադրում են իրենց արտադրանքը ուղիղ ներկայացնող ցանկացած ընկերության, և այդ փաստաթուղթը չի հանդիսանում սահմանափակող կամ խտրական: Երաշխիքային նամակի պահանջով Պատվիրատուն ապահովագրվում է արտադրողի կամ նրա ներկայացուցչի կողմից չերաշխավորված ապրանքի ձեռքբերման վտանգից: Հակառակ դեպքում խոտանով ապրանքի կիրառման արդյունքում հիվանդի կյանքին անդառնալի հետևանք թողնելու պարագայում ամբողջ պատասխանատվությունը ընկնում է Պատվիրատուի վրա:

Որպես կարևոր դիտարկում նշենք նաև, որ ապրանքի արտադրական խոտանի հայտնաբերման դեպքում արտադրողը իրականացնում է տվյալ ապրանքի ամբողջ ապրանքախմբի հետ կանչ, որով բացառում է հնարավոր խոտանված ապրանքի հետագա կիրառումը: Նշված գործընթացի ապահովման համար անհրաժեշտ է երաշխիքային

նամակի առկայություն, որով արտադրողը ինֆորմացիա է ունենում ապրանքի հետագա տեղաշարժի մասին:

Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետում նշված է «Եթե դրանք կիրառելի են» բառակապակցությունը: Հարց է առաջանում, եթե դա չենք կիրառում մարդու առողջության և կյանքի համար կարևորագույն նշանակություն ունեցող ապրանքների վրա, ապա որ դեպքերում է այն կիրառելի: Ցանկացած մրցույթի ցանկացած ապրանքի համար էլ յուրաքանչյուր մասնակից, Երաշխիքային նամակի ինչպես նաև համապատասխանության սերտիֆիկատի չներկայացնելու մտադրությունից ելնելով, կարող է բողոքարկել և հայտարարել, որ դրանք կիրառելի չեն, և այդ դեպքում Կարգի պահանջը կդառնա գործնականում անգործածելի, ուստի, ինչպես և Կարգն է նախատեսում, դրանց կիրառելիությունը միանշանակ որոշում և հիմնավորում է Պատվիրատուն:

Այսպիսով՝ Պատվիրատուն գտնում է, որ համապատասխանության սերտիֆիկատի պահանջը տվյալ դեպքում կիրառելի չէ դերակատարության բացակայության հիմքով, իսկ Երաշխիքային նամակի պահանջը հիմնավոր է և կիրառելի:

Մասնակցի այն պնդումը, որ վիճարկվող դրույթը Պատվիրատուն կիրառում է ընտրողական և այլ հրավերներում չի կիրառում, նույնպես անհիմն է: Նշված դրույթը Կարգում ներառելու օրվանից սկսած (10.11.2019թ.) Պատվիրատուն կիրառում է այդ դրույթը բոլոր ընթացակարգերում նմանատիպ ապրանքների վրա: Մասնավորապես. այն կիրառված է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/23», «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52», «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/54», «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/56», «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/57» և «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/58» ծածկագրերով ընթացակարգերում և բոլոր դեպքերում էլ մատակարար կազմակերպությունները ներկայացրել են այդ փաստաթուղթը, բացառությամբ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի: Ուշագրավ է այն փաստը, որ հենց «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն մասնակցել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնման ընթացակարգին, որտեղ նախատեսված է եղել հենց նույն դրույթը, ճանաչվել է հաղթող, ստանձնել պարտավորություն նշված փաստաթուղթը ներկայացնելու մասով, այդպիսով փաստացի ընդունելով նշված պայմանի կիրառելիությունը: Միաժամանակ տեղեկացնենք, որ Պատվիրատուն բոլոր ապրանքների համար չէ կիրառում այդ պահանջը, այլ ինվազիվ միջամտության համար նախատեսված այն ապրանքների համար (օրինակ սրտանոթի ստենտ, կորոնար կաթետր բալունային և այլն), որոնք ունեն անհատական նույնականացման համարներ և հնարավոր չէ իրականացնել որակի համապատասխանության փորձաքննություն: Այդ ապրանքները

ուղղակիորեն ներթափանցվում են մարդու օրգանիզմ, ստենտի դեպքում տեղադրվում արտանոթում, և ամբողջ կյանքի ընթացքում մնում մարդու օրգանիզմում, կատարելով կյանքի համար խիստ կարևոր ֆունկցիա:

Պատվիրատուն հաշվի է առել խնդրահարույց ապրանքների առանձնահատկությունները և կարևորագույն դերակատարությունը, ուստի և կիրառել է ապրանքի որակի վերահսկողությանն ուղղված այդ դրույթը:

Ինչ վերաբերում է ընկերության այն պնդմանը, որ որևէ հնարավոր մասնակից կարող է ներկայացնել տեխնիկական պահանջներին ամբողջությամբ համապատասխանող կոնկրետ արտադրողի կողմից արտադրված ապրանք, գնված որևէ վերավաճառողից, սակայն չի կարող ներկայացնել հրավերով նախատեսված երաշխիքային նամակը, ուստի և նշված երաշխիքային նամակի պահանջը հանդիսանում է խտրական կամ սահմանափակող, ապա հայտնենք հետևյալը.

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

«1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար»:

Ցանկացած արտադրող կամ նրա ներկայացուցիչ առանց խնդիրներ ստեղծելու տրամադրում է այդ երաշխիքը, երբ համոզված է, որ ներկայացվող ապրանքը հանդիսանում է իր արտադրանքը: Ուստի եթե արտադրողը կամ նրա ներկայացուցիչը չի տրամադրում երաշխիքային նամակը, ուրեմն նա համոզված չէ այդ ապրանքի կեղծ չլինելու փաստի վրա, հետևաբար և Պատվիրատուն ևս չի կարող գնալ նման չարդարացված ռիսկի՝ գնելով անհայտ ծագման, որակի կամ կեղծ արտադրության ապրանքներ: Բացի այդ հրավերում ոչ մի տեղ չկա նշում, որ արտադրողի ներկայացուցիչը պետք է հանդիսանա ՀՀ-ում գործունեություն իրականացնող անձ:

Ընթացակարգին կարող են մասնակցել ինչպես ռեզիդենտ, այնպես էլ ոչ ռեզիդենտ ընկերություններ որոնք ունեն հնարավորություն ներմուծել ապրանքը ցանկացած երկրից, ստանալով արտադրողից կամ նրա տվյալ երկրում գործող ներկայացուցչից

(ներկայացուցիչներից) այդ երաշխիքային նամակը, իսկ նմանատիպ ապրանքներ արտադրող ցանկացած կազմակերպություն ունի անկասկած մեկից ավելի ներկայացուցիչներ, դիստրիբյուտորներ, ուստի մասնակցի հայտարարությունը խտրական լինելու մասով նույնպես անհիմն է:

Նկատառում. երաշխիքային նամակը ինքնին չի կարող հանդիսանալ խտրական պահանջ, քանզի այն նախատեսված է Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետով, հաստատված է ՀՀ կառավարության կողմից, և ցանկացած ապրանքի վրա կիրառելու դեպքում ենթադրում է նույն իմաստը: Իսկ բոլորս գիտենք, որ Կարգով խտրական մոտեցումներ և պահանջներ չեն սահմանվում:

Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված երաշխիքային նամակի ներկայացման պահանջը չի հանդիսանում խտրական կամ սահմանափակող:

Ամփոփելով վերոնշյալ տեղեկությունները՝ գտնում ենք, որ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/58 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը լիովին համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին և բողոքը հիմնավոր չէ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.07.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադրված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/58 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2020/58 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/58» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1-ի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժիններով ներկայացված գնման առարկաների համար սահմանվել է ստորև ներկայացված տեխնիկական բնութագրերը.

Չափաբաժնի համարը	Միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՄԱ դասակարգման	Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը
2	33141000	Կաթետր ախտորոշիչ	<p>Կաթետրի նյութը նեյլոն/պոլիուրետան , ունի պողպատյա հյուսապատում, որը օժտում է կաթետրին ամրությամբ և ռենտգենկոնտրաստությամբ: Ունի չվնասող, ռենտգենկոնտրաստ դիստալ ծայր, կաթետրի ներքին լուսանցք է՝ 4F; 5F; 5.2 F; 6F մաքսիմալ ճնշումը 1200psi: Արյան ծավալային հոսքի արագությունն է՝16,7 մլ/վ - 4F; 21,3 մլ/վ- 5F; 21 մլ/վ- 5,2F, 35 մլ/վ- 6F. կաթետրի համար: Կաթետրի ծայրի ձեւերը՝ JL 3,5; JL4; JL4,5; JL5; JL6; AL1; AL2; AL3; JR3,5; JR4; JR4 MOD; JR5; JR5 MOD; JR6; AR MOD; AR1 MOD; AR2 MOD; 3DRS; SRC; MPA1; MPA1; MPB2; MPB3; SON1; SON2; SON3; CAS1; CAS2; CAS3; BARBEAU; EGB1; EGB2; EGB3; LCB; RCB; IM; PIG; PIG145; PIG155; NIH;UNIV; STR; C1; C2; C3; Renal Double Curve Small; Renal Double Curve Adult; Shepherd Hook 1; Shepherd Hook 2;Celiac Trunk; Uni Select; J-Curvel; J-Curvel 1; J-Curvel 2; SIM1; SIM2; SIM3; SIM4; H1; H3; HN3; HN4; MAN; BERN; BERN 2; JB1; JB2; JB3; VERT; N.I.H., RBL Կաթետրի երկարությունը 65 սմ; 80սմ; 100սմ; 125սմ: Նյութը ապահովում է կաթետրի ճկունությունը ըստ համապատասխան անոթի: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:</p>
3	33141000	Կաթետր բալոն պերիֆերիկ	<p>Բարձր ճնշման բարձր անցունակության դիլատացիոն բալոն-կաթետր, համատեղելի 0,018" և 0,035" ուղղորդիչների հետ: Կաթետրի նյութն է Duralyn™, երկարությունը ըստ տեսակների 80, 90, 135 և 150 սմ, բալլոնի շառավիղը ըստ տեսակների՝ 3.9F/4.7F/5F, ճեղքման ճնշումը 8-ից 18 ատմ ըստ տեսակների և չափսերի: Չափսերը՝ տրամագիծը 2.0-ից մինչև 10,0մմ ըստ տեսակների, երկարությունը 2-ից մինչև 30սմ ըստ տեսակների: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:</p>
4	33141000	Կաթետր ուղղորդիչ	<p>Տեխնոլոգիան ՝ Full Wall: Չափերը ՝ 5F-8F: Կախված վիրահատվող հիվանդի քաշ/անոթ հարաբերակցությունից պահանջվող երկարությաններն են՝ 2.5մմ , 16մմ: Լուսանցքը՝ 5-8F Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի առանձնահատկություններից ուղղորդիչ լարի պահանջվող երկարությունն է՝ 100սմ: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ</p>

			վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:
5	33181000	Ստենտ դեղապատ	<p>Լազերով կտրված կորալտ-քրոմի համաձուլվացքից (L-605) կազմված գլան, ստենտի ծածկը՝ էվերոլիմուս դեղանյութ արտազատող ծածկ: 2.25-3.0 մմ տրամագծով ստենտը ունի երեք կարճ և երեք երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: 3.5-4.0 մմ-ոց ստենտը ունի երեք կարճ և վեց երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: Ստենտի եզրային օղը ձևավորված է սիմետրիկ ամրակներով: Ստենտի պատերի հաստությունը՝ ոչ ավել քան քան 0.0032”:: Ստենտը ֆեռոմագնիսական չէ: Տրամագծերը՝ 2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.25, 3.5, 4.0 մմ: Երկարությունները՝ 8, 12, 15, 18, 23, 28, 33, 38 մմ : Բացման նոմինալ ճնշումը՝ 11 atm, պայթման առավելագույն ճնշումը՝ 18 atm: Բալոնի նյութը՝ բազմաշերտ պեբաքս: Ստենտի դեղորայքային ծածկը բաղկացած է ակրիլային և ֆլուորո պոլիմերներից: Դեղանյութի կոնցենտրացիան ստենտի մակերեսին՝ 100 մկգ/սմ²: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:</p>
6	33181000	Ստենտ դեղապատ	<p>Դեղը Սիրոլիմուս, որով պատված է միայն ստենտի անցումային մասերը, կապերի վրա դեղ չկա, որը նպաստում է ավելցուկի պակասեցմանը: Ստենտի նյութը կորալտ քրոմ, բաց դիզայն, ստենտի նյութի հաստությունը մինչև 80μm, ստենտի ճաղերի բացվածքը 131 աստիճանից ոչ ավել, դեղի դոզան մինչև 3.9μg/mm պոլիմեր DL-lactide-co-caprolactone, դեղով պատված է միայն ստենտի արտաքին մասը: Պոլիմերը վերանում է 3-4ամսվա ընթացքում, ստենտի բալոնը եռաթև, Nylon 12 նյութից: Մուտքի տրամագիծը՝ ոչ ավել 0.43մմ, փակված վիճակում ստենտի տրամագիծը 1.12մմ- 3.0մմ տրամագծի դեպքում: Դիստալ հատվածը հիդրոֆիլիկ ծածկույթ է , պրոքսիմալ հատվածը սիլիկոնե ծածկույթ: Մատակարարման համարակցի աշխատաքային երկարությունը ոչ պակաս 140սմ: Երկարությունը՝ 9մմ, 12մմ, 15մմ, 18մմ, 24մմ, 28մմ, 33մմ, 38մմ; տրամագծերը՝ 2,25մմ, 2,5մմ, 2,75մմ, 3,0մմ, 3,5մմ, 4,0մմ: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:</p>
7	33181000	Ստենտ դեղապատ	<p>Նյութը՝ կորալտ-քրոմի համաձուլվածք: Մատակարարման համակարգի աշխատանքային երկարությունը՝ ոչ պակաս քան 140սմ: Կիրառվող նյութեր պոլիմեր՝ հեմոհամատեղելի: Բալոնի (կաթետերի) նյութ՝ Fulcrum: Կիրառվող դեղանյութը՝ Ջոտարոլիմուս ացիտոտոքսիկ “limus” խմբի կամ Սիրոլիմուս՝ օժտված բարձր լիպոֆիլությամբ կամ էվերոլիմուս դեղանյութ արտազատող: Դեղանյութի ձերբազատումը՝ 180 օրում՝ 100%: Պահանջվող տրամագծի՝ 2-4 մմ</p>

			տիրույթի միջակայքում ըստ պահանջվող երկարությունների՝ 9-38 մմ տիրույթի միջակայքում: Ստենտի պատերի հաստությունը՝ 0.003”- 0.0036” տիրույթի միջակայքում: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:
--	--	--	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի 29.06.2020թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 02.07.2020թ. ներկայացրած դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում են հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածը սահմանում է՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին,

անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանվում է, որ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի կամ թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը, եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է **«կամ» շաղկապով** բաժանված պայմաններով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 13-րդ կետով սահմանվում է, որ պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա (ունենան) գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից:

Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերության համաձայն՝

Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, **իսկ պայմանագրի կադարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:**

Այսպես՝ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն իր կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊԶԲ-20/58» ծածկագրով բաց մրցույթ, որի հրավերում ներառված պայմանագրի նախագծի

Հավելված 1-ի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժիններով ներկայացված գնման առարկաների համար սահմանել է համապատասխան տեխնիկական բնութագրեր:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 15.07.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/2/10545-2020 գրությամբ դիմել է «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ խնդրելով տրամադրել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/58» ծածկագրով գնման ընթացակարգի կազմակերպման համար պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված և հաստատված գնման հայտի պատճենը:

Ի պատասխան վերը նշված գրության՝ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ներկայացրել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/58» ծածկագրով գնման ընթացակարգի կազմակերպման համար հիմք հանդիսացող պատասխանատու ստորաբաժանման կողմից 12.06.2020թ. կազմված և հաստատված թիվ 58 գնման հայտը:

Գնման հայտի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժիններով ներկայացված գնման առարկաների համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

Չափաբաժնի համարը	Միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՄԱ դասակարգման	Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը
2	33141000	Կաթետր ախտորոշիչ	Կաթետրի նյութը նեյլոն/պոլիուրետան , ունի պողպատյա հյուսապատում, որը օժտում է կաթետերին ամրությամբ և ռենտգենկոնտրաստությամբ: Ունի չվնասող, ռենտգենկոնտրաստ դիստալ ծայր, կաթետերի ներքին լուսանցք է՝ 4F; 5F; 5.2 F; 6F մաքսիմալ ճնշումը 1200psi: Արյան ծավալային հոսքի արագությունն է16,7 մլ/վ - 4F; 21,3 մլ/վ- 5F; 21 մլ/վ- 5,2F, 35 մլ/վ- 6F. կաթետերի համար: Կաթետերի ծայրի ձեւերը՝ JL 3,5; JL4; JL4,5; JL5; JL6; AL1; AL2; AL3; JR3,5; JR4; JR4 MOD; JR5; JR5 MOD; JR6; AR MOD; AR1 MOD; AR2 MOD; 3DRS; SRC; MPA1; MPA1; MPB2; MPB3; SON1; SON2; SON3; CAS1; CAS2; CAS3; BARBEAU; EGB1; EGB2; EGB3; LCB; RCB; IM; PIG; PIG145; PIG155; NIH;UNIV; STR; C1; C2; C3; Renal Double Curve Small; Renal Double Curve Adult; Shepherd Hook 1; Shepherd Hook 2;Celiac Trunk; Uni Select; J-Curvel; J-Curvel 1; J-Curvel 2; SIM1; SIM2; SIM3; SIM4; H1; H3; HN3; HN4; MAN; BERN; BERN 2; JB1; JB2; JB3; VERT; N.I.H., RBL Կաթետերի երկարությունը 65 սմ; 80սմ; 100սմ; 125սմ: Նյութը ապահովում է կաթետրի ճկունությունը ըստ համապատասխան անոթի: Պայմանագրի կադրման փուլում պետք է

			<u>ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից սրված երաշխիքային նամակ:</u>
3	33141000	Կաթետր բալոն պերիֆերիկ	Բարձր ճնշման բարձր անցունակության դիլատացիոն բալոն-կաթետր, համատեղելի 0,018" և 0,035" ուղղորդիչների հետ: Կաթետրի նյութն է Duralyn™, երկարությունը ըստ տեսակների 80, 90, 135 և 150 սմ, բալլոնի շառավիղը ըստ տեսակների՝ 3.9F/4.7F/5F, ճեղքման ճնշումը 8-ից 18 ատմ ըստ տեսակների և չափսերի: Չափսերը՝ տրամագիծը 2.0-ից մինչև 10,0մմ ըստ տեսակների, երկարությունը 2-ից մինչև 30սմ ըստ տեսակների: <u>Պայմանագրի կապարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից սրված երաշխիքային նամակ:</u>
4	33141000	Կաթետր ուղղորդիչ	Տեխնոլոգիան՝ Full Wall: Չափերը՝ 5F-8F: Կախված վիրահատվող հիվանդի քաշ/անոթ հարաբերակցությունից պահանջվող երկարությաններն են՝ 2.5մմ , 16մմ: Լուսանցքը՝ 5-8F Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի առանձնահատկություններից ուղղորդիչ լարի պահանջվող երկարությունն է՝ 100սմ: <u>Պայմանագրի կապարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից սրված երաշխիքային նամակ:</u>
5	33181000	Ստենտ դեղապատ	Լազերով կտրված կոբալտ-քրոմի համաձուլվացքից (L-605) կազմված գլան, ստենտի ծածկը՝ էվերոլիմուս դեղանյութ արտազատող ծածկ: 2.25-3.0 մմ տրամագծով ստենտը ունի երեք կարճ և երեք երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: 3.5-4.0 մմ-ոց ստենտը ունի երեք կարճ և վեց երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: Ստենտի եզրային օղը ձևավորված է սիմետրիկ ամրակներով: Ստենտի պատերի հաստությունը՝ ոչ ավել քան, քան 0.0032":: Ստենտը ֆեռոմագնիսական չէ: Տրամագծերը՝ 2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.25, 3.5, 4.0 մմ: Երկարությունները՝ 8, 12, 15, 18, 23, 28, 33, 38 մմ : Բացման նոմինալ ճնշումը՝ 11 atm, պայթման առավելագույն ճնշումը՝ 18 atm: Բալոնի նյութը՝ բազմաշերտ պեբաքս: Ստենտի դեղորայքային ծածկը բաղկացած է ակրիլային և ֆլուորո պոլիմերներից: Դեղանյութի կոնցենտրացիան ստենտի մակերեսին՝ 100 մկգ/սմ2: <u>Պայմանագրի կապարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից սրված երաշխիքային նամակ:</u>
6	33181000	Ստենտ դեղապատ	Դեղը Սիրոլիմուս, որով պատված է միայն ստենտի անցումային մասերը, կապերի վրա դեղ չկա, որը նպաստում է ավելցուկի պակասեցմանը: Ստենտի նյութը կոբալտ քրոմ, բաց դիզայն, ստենտի նյութի հաստությունը մինչև 80μm, ստենտի ճաղերի բացվածքը 131 աստիճանից ոչ ավել, դեղի դոզան մինչև 3.9μg/mm պոլիմեր DL-lactide-co-caprolactone,

			<p>դեղով պատված է միայն ստենտի արտաքին մասը: Պոլիմերը վերանում է 3-4ամսվա ընթացքում, ստենտի բալոնը եռաթև, Nylon 12 նյութից: Մուտքի տրամագիծը՝ ոչ ավել 0.43մմ, փակված վիճակում ստենտի տրամագիծը 1.12մմ- 3.0մմ տրամագծի դեպքում: Դիստալ հատվածը հիդրոֆիլիկ ծածկույթ է, պրոքսիմալ հատվածը սիլիկոնե ծածկույթ: Մատակարարման համարակգի աշխատաքային երկարությունը ոչ պակաս 140սմ: Երկարությունը՝ 9մմ, 12մմ, 15մմ, 18մմ, 24մմ, 28մմ, 33մմ, 38մմ; տրամագծերը՝ 2,25մմ, 2,5մմ, 2,75մմ, 3,0մմ, 3,5մմ, 4,0մմ: <u>Պայմանագրի կատարման փուլում պեքը է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:</u></p>
7	33181000	Ստենտ դեղապատ	<p>Նյութը՝ կոբալտ-քրոմի համաձուլվածք: Մատակարարման համակարգի աշխատանքային երկարությունը՝ ոչ պակաս քան 140սմ: Կիրառվող նյութեր պոլիմեր՝ հեմոհամատեղելի: Բալոնի (կաթետերի) նյութ՝ Fulcrum: Կիրառվող դեղանյութը՝ Ջոտարոլիմուս ացիտոտոքսիկ “limus” խմբի կամ Սիրոլիմուս՝ օժտված բարձր լիպոֆիլությամբ կամ էվերոլիմուս դեղանյութ արտազատող: Դեղանյութի ձերբազատումը՝ 180 օրում՝ 100%: Պահանջվող տրամագծի՝ 2-4 մմ տիրույթի միջակայքում ըստ պահանջվող երկարությունների՝ 9-38 մմ տիրույթի միջակայքում: Ստենտի պատերի հաստությունը՝ 0.003”- 0.0036” տիրույթի միջակայքում: <u>Պայմանագրի կատարման փուլում պեքը է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:</u></p>

Սույնով արձանագրում եմ, որ Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերությամբ հստակ սահմանվում է, որ այն ապրանքների համար, որոնց դեպքում կիրառելի են, պատասխանատու ստորաբաժանումը գնման հայտը կազմելիս կարող է նախատեսել պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման պահանջ: Ընդ որում երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը Կարգով սահմանված է «կամ» շաղկապով, հետևաբար հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, գտնում եմ, որ երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտության առնվազն մեկ կամ միայն մեկ պահանջի նախատեսումը գնման հայտով, հետևաբար նաև Ընթացակարգի հրավերով, իրավաչափ է:

Այսպիսով, ուսումնասիրելով «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/58» ծածկագրով Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1-ի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը, Պատվիրատուի կողմից տրամադրված թիվ 58 գնման հայտը, արձանագրում եմ, որ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից պահպանվել է Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերությամբ սահմանված պահանջը, հետևաբար «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ալմաքսիմս» ՍՊԸ-ի կողմից 29.06.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**



ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ